ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ը՝ «ՈՒՍՈՒՑՉԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ»

ՆԱԹԻԱ ՈՒՉԱՎԱՆ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ

Հոկտեմբերի 5-ին, «Ուսուցչի միջազգային օրվա» կապակցությամբ, Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության նախարար Ալեքսանդրե Ծուլաձեն շնորհավորեց ուսուցիչներին:

Նախարարի շնորհավորական ուղերձում, մասնավորապես, ասված է.

«Հարգելի ուսուցիչներ, դուք մեր ժամանակի իսկական հերոսներն եք, եւ ուզում եմ շնորհակալություն հայտնել ձեզ՝ ձեր մասնագիտությանը նվիրվածության համար: Մեր հիմնական խնդիրն է՝ աջակցել ուսուցիչներին ինքնակատարելագործման եւ մասնագիտական առաջխաղացման գործում: Ըստ այդմ, եկեք ստեղծենք այնպիսի աշխատանքային պայմաններ, որոնց դուք արժանի եք: Մեկ անգամ եւս շնորհավորում եմ բոլորին՝ օրվա կապակցությամբ, մաղթում եմ ձեզ հաջողություն եւ բարգավաճում»:

«Ուսուցչի միջազգային օրվա» կապակցությամբ, 7-ամյա ավանդույթի համաձայն, անցկացվեց եռաստիճան մրցույթ, որի արդյունքով բացահայտվեցին եզրափակիչ փուլ անցած հինգ մասնակիցները: Այստեղից երկուսը՝ Թբիլիսիի, երեքը մարզերի դպրոցների ուսուցիչներ էին:

Եզրափակիչ փուլում էլ՝ 20 հոգուց բաղկացած հեղինակավոր ժյուրին 2024 թվականի Ուսուցչի ազգային մրցանակի դափնեկիր հռչակեց Նաթիա Ուչավային:

Ազգային մրցանակի դափնեկիրը, որպես դրամական պարգեւ, կստանա 15000 լարի: Յոթ տարի առաջ հիմնադրված մրցույթի հիմնական նպատակն է՝ բարձրացնել ուսուցչի մասնագիտության հեղինակությունն ու հանրահռչակումը: Տարվա ուսուցչի կարգավիճակ ստանալու համար՝ անհրաժեշտ է բավարարել մի քանի չափանիշ: Դրանց թվում են ուսումնական գործընթացում օգտագործվող ստեղծագործական հմտությունները, ստեղծագործականությունը, մասնագիտական մոտեցումները: Ամեն տարի մրցույթը համախմբում է ուսուցիչներին Վրաստանի բոլոր քաղաքներից ու մարզերից:

Պարգեւատրման արարողությունը տեղի ունեցավ «Իվենթ Հոլում»:

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

Հոկտեմբերի 5-ին, «Ուսուցիչների միջազգային օրվա» կապակցությամբ, Ախալքալաքիի քաղաքապետ Մելքոն Մակարյանի որոշմամբ, քաղաքապետարանի դահլիճում տեղի ունեցավ վաստակաշատ ուսուցիչների պարգեւատրման արարողություն:

Միջոցառմանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանը, Սամցխե-Ջավախեթիի երկրամասի պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, փոխնահանգապետ Շոթա Ռոստիաշվիլին, Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը, փոխքաղաքապետեր եւ հրավիրված հյուրեր:

Կրթության ոլորտում աշխատող 5 ուսուցչի՝ Սվետլանա Կարոյանին, Ալիկ Քսպոյանին, Ատոմ Էլիզբարյանին, Կառլեն Կարապետյանին եւ Գագիկ Էլիզբարյանին, գալիք սերունդների կրթության գործում ունեցած առանձնահատուկ ավանդի համար, շնորհվեցին շնորհակալագրեր եւ խորհրդանշական նվերներ:

- Ինձ համար մեծ պատիվ է մասնակցել այս հանդիսավոր միջոցառմանը: Ուսուցչի մասնագիտությունը եւ դերն անչափ կարեւոր են հասարակության զարգացման գործում: Սա մասնագիտություն է, որը ձեւավորում է այլ մասնագիտություններ: Տեղական ինքնակառավարման մարմինների, Ախալքալաքիի քաղաքապետարանի անունից ուզում եմ շնորհավորել բոլոր ուսուցիչներին, ովքեր այստեղ են եւ ապրում են մեր մունիցիպալիտետում, մաղթում եմ մեծ հաջողություններ ե'ւ մասնագիտական, ե'ւ անձնական կյանքում,- ասաց Մելքոն Մակարյանը:

ԱԽԱԼՑԻԽԵ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ «ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ»

«Ուսուցիչների միջազգային օրվա» կապակցությամբ, Ախալցիխեի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կազմակերպմամբ, անցկացվեց հանդիպում:

Հրավիրված մանկավարժների հետ հանդիպեցին Սամցխե-Ջավախեթիի երկրամասում պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, Ախալցիխեի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլին, սակրեբուլոյի նախագահ Դավիթ Լոմիձեն, հանրակրթական ռեսուրս-կենտրոնի ղեկավար Խաթունա Խմալաձեն:

Նրանք շնորհավորեցին ուսուցիչներին՝ մանկավարժների միջազգային օրվա կապակցությամբ եւ մաղթեցին հաջողություններ:

Մանկավարժական արգասաբեր գործունեության համար՝ քաղաքապետարանում գործող 38 հանրային դպրոցների եւ «Մզեքա» մասնավոր դպրոցի մանկավարժները քաղաքապետարանից ստացան պատվոգրեր ու հուշանվերներ:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻԻ ԿՈՂՄԻՑ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՖՈՒՆՏ ՍՏԵՌԼԻՆԳՈՎ ԳՆՎԱԾ ԻՈԱՆԵ ԶՈՍԻՄԵԻ ԵԶԱԿԻ ՁԵՌԱԳԻՐԸ ԲԵՐՎԵՑ ՎՐԱՍՏԱՆ

Իոանե Զոսիմեի եզակի ձեռագիրը այլեւս Վրաստանում է: Բիձինա Իվանիշվիլիի եւ նրա ընտանիքի կողմից Christie's-ի աճուրդում մեկ միլիոն ֆունտ ստեռլինգով գնված գանձը՝ որպես նվեր կտրամադրվի պետությանը:

Ձեռագիրը հանդիսավորապես ընդունվեց արդեն իսկ Թբիլիսիի միջազգային օդանավակայանում: Այստեղ էին Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարարի պաշտոնակատար Սոսո Բաղաթուրիան եւ արվեստի թանգարանի փոխտնօրեն Նիկա Ախալբեգաշվիլին, ինչպես նաեւ Վրաց Ուղղափառ Սուրբ եկեղեցու ներկայացուցիչներ:

Օդանավակայանից ձեռագիրը տեղափոխվեց Վրաստանի պատրիարքարան: Ավելի ուշ՝ այն կփոխանցվի Ազգային թանգարանին: Սկզբում ձեռագիրը կցուցադրվի թանգարանի Ոսկե ֆոնդում, եւ հանրությունը հնարավորություն կունենա տեսնել այն, իսկ հետո գիտնականները կաշխատեն ձեռագիրը մանրամասն ուսումնասիրելու ուղղությամբ:

Բիձինա Իվանիշվիլին ձեռագիրը գնել է այս տարվա հունիսի 11-ին Christie's-ի աճուրդում, մեկ միլիոն 250 հազար ֆունտ ստեռլինգով:

ԹԱՏՐՈՆ

«ԽԱՆՈՒՄԱՆ» ՀԻԱՅՐԵՑ ԵՐԵՎԱՆՑԻՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 9-ին եւ 10-ին, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը հայտնի վրացի դրամատուրգ Աքվսենտի Ցագարելու (1857-1902) «Խանումա» բեմադրությամբ, ներկայացավ Երեւանի Կ.Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնում: Հյուրախաղն իրականացվել է Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար, աշխարհահռչակ ռեժիսոր Ռոբերտ Ստուրուայի եւ մեր թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի համաբեմադրությամբ՝ «Խանուման» երեւանյան թատրոնի դահլիճում երկու օր անընդմեջ ազատ տեղ չէր թողել:

Ինչպեսեւ նշել էր «Վրաստանը», Ցագարելու այս պիեսը, որի առաջնախաղը ադամյանցիները ներկայացրեցին սեպտեմբերի 25-ին Թբիլիսիի Ալ.Գրիբոյեդովի պետական ռուսական դրամատիկական թատրոնում, ներկայացվեց նոր մեկնաբանությամբ: Բավական հետաքրքիր էր ռեժիսորական մոտեցումը, դերասանական խաղը, ինչպես նաեւ երաժշտական, պարային ձեւավորումները եւ, իհարկե, անվանի նկարիչ Մայիս Մխիթարյանի գույների հրավառությունը:

Հյուրախաղերին, հոկտեմբերի 9-10-ին, «Խանուման» ներկայացվեց դերակատարների երկու կազմով՝ առավել ընդգծելով տաղանդավոր դերասանական խմբի ներուժը:

Հատկանշական է, որ 100-ից ավելի տարիներ բեմերից չիջնող, այսօր էլ պահանջված ու սպասված «Խանուման» մշտապես ընդգրկված է հայաստանյան թատրոնների խաղացանկում: Եվ սակայն, նույն Հայաստանում միշտ ուրիշ զգացողությամբ են սպասել ադամյանցիներին, ում, երեւի թե, ամենից ճիշտ է հաջողվել արտահայտել հարազատ Թիֆլիսի վարքն ու բարքը եւ բարբառային համն ու հոտը:

ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆՀԵԹԵԹՈՒԹՅՈՒՆԸ

ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԽՈՍՈՒՄ ԵՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՍԱԿԱՅՆ ՆՐԱՆՑ ԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ «ԵՐԿՐՈՐԴ ՃԱԿԱՏԻ» ԲԱՑՈՒՄՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մեր եվրոպական գործընկերներին լրջորեն մտահոգեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի հայտարարությունն այն մասին, որ պատրաստ են Վրաստանին օգնել Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի հետ հարաբերությունների կարգավորման գործում, ինչը, եվրախորհրդարանականների համոզմամբ, Վրաստանի բռնազավթված տարածքների չճանաչման քաղաքականությունից Վրաստանի կառավարության հրաժարման ցուցադրումն է:

Եվրախորհրդարանականների համար առավել մտահոգիչ էին վարչապետ Իրակլի Կոբախիձեի խոսքերն այն մասին, որ Վրաստանը Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ չի սահմանի, միայն կկանխի իր տարածքով պատժամիջոցների խախտման փորձերը:

Նույնիսկ տնտեսագիտությունից հեռու գտնվող մարդկանց համար ակնհայտ է, որ Ռուսաստանի դեմ Վրաստանի կողմից պատժամիջոցների սահմանումը կնմանվի մոծակի խայթոցի, թեպետ Վրաստանի համար հյուսիսային հարեւանի հետ հարաբերությունների սրումը կարող է հանգեցնել պետական բյուջեի պատկառելի գումարների կորստի: Եվրախորհրդարանականներին զայրացրել է Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ վերջին երկու տարիների ընթացքում տնտեսական համագործակցության ընդլայնումը, այն, որ Ռուսաստանի շուրջ 100 հազար քաղաքացիներ մշտական բնակություն են հաստատել Վրաստանում, բացել ավելի քան 26 հազար արտադրություն, Վրաստանում գնել են անշարժ գույք, գործունեություն են ծավալել, ինչը, եվրախորհրդարանականների հավաստմամբ, առաջացնում է «փողերի լվացման ռիսկեր, ինչը սպառնում է Վրաստանի ազգային անվտանգությանը»: Փոխարենը, Եվրախորհրդարանը Վրաստանից պահանջում է ի պատասխան Ուկրաինայում լայնածավալ ներխուժման, Ռուսաստանի դեմ սահմանել պատժամիջոցներ եւ այսուհետեւ երկրի արտաքին քաղաքական կուրսը համաձայնեցնել Ռուսաստանի նկատմամբ Եվրամիության արտաքին քաղաքականության եւ ռազմավարության հետ (դժվար է պատկերացնել դրա հետեւանքները Վրաստանի համար):

Եվրախորհրդարանի ընդունած բանաձեւում մոռացության չի մատնվել նաեւ Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին: Եվրախորհրդարանականները բարձրացրել են նրան անհապաղ ազատ արձակելու եւ արտասահմանում բժշկական օգնություն ստանալու հնարավորություն ընձեռելու պահանջը: Հետաքրքիր պատկեր է ստացվում՝ դատարանի կողմից պաշտոնապես դատապարտված մեղադրյալը, բանտային խցիկի փոխարեն, հարմարավետորեն «ապրում է» հիվանդասենյակում, թեպետ նրա արտասահմանյան «երկրպագուներին» դա ձեռք չի տալիս եւ պահանջում են նրա ազատ արձակումը:

ԳԻԱ ՎՈԼՍԿԻ. «ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԸ ՀԱԿԱՎՐԱՑԱԿԱՆ Է ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՊԵՍ ԿՈՂՄՆԱԿԱԼ»

Արձագանքելով Եվրախորհրդարանի Վրաստանի հասցեին ընդունած որոշմանը՝ Վրաստանի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Գիորգի Վոլսկին հայտարարեց, որ Ռուսաստանի դեմ Վրաստանի կողմից տնտեսական պատժամիջոցները բացարձակապես ոչ մի ազդեցություն չեն ունենա Ռուսաստանի վրա, սակայն Վրաստանի համար դրանք կունենան տնտեսական կործանարար արդյունք:

- Մի շարք եվրոպական երկրներ անհամեմատ ինտենսիվ շարունակում են առեւտուրը Ռուսաստանի հետ, սակայն, չգիտես ինչու, նման պահանջ ներկայացվում է միայն Վրաստանին: Քաջ գիտակցում ենք, որ, համաշխարհային դիմակայության պայմաններում, Վրաստանի դեմ Ռուսաստանի ագրեսիան կպահանջի որոշակի ռեսուրսներ, սակայն Վրաստանի համար դա կլինի կործանարար: Վրաստանի կողմից Ռուսաստանի դեմ տնտեսական պատժամիջոցներն աննշան ազդեցություն կունենան նրա էկոնոմիկայի վրա, բայց Վրաստանը կկրի կործանարար հետեւանքներ: Ուստի, մենք ընդունած բանաձեւը ընկալում ենք՝ որպես հակավրացական, ուղղված քաղաքական առանձին սուբյեկտների աջակցությանը,- հայտարարեց Գիա Վոլսկին:

ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵ. «ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՐԵՆ ԱՆԱՐԴԱՐԱՑԻ Է»

Այսպես գնահատեց Եվրախորհրդարանի ընդունած որոշումը Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն՝ նշելով, որ Ուկրաինայում պատերազմի սկզբից ի վեր, Եվրախորհրդարանն ընդունել է երեք նման բանաձեւ, եւ դրանցում ուրվագծվում են այն ուժերը, որոնց մենք կոչում ենք գլոբալ պատերազմի կուսակցություն:

- Ակնհայտ է, որ այդ կոնկրետ ուժերը բացահայտ չեն դժգոհում, որ երկրում չի բացվել երկրորդ ճակատ: Ու հիմա հույսը դրել են խորհրդարանական ընտրությունների վրա: Եվ հենց դրա համար էլ Եվրախորհրդարանում անցկացվեց այդ բանաձեւի քննարկումը: Եվ սակայն ջանքերն ապարդյուն են, քանի որ վրաց հասարակայնությունը քաջ գիտակցում է, թե ինչ է տեղի ունենում իր շուրջ, ինչ ուժեր են գործում, ինչ շահեր են հետապնդում, ինչ ծայրահեղականներ են այդ ամենի հետեւում կանգնած,- հայտարարեց Կախա Կալաձեն ու հավելեց, որ ընդունած բանաձեւը բացարձակապես անարդարացի է:

ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ԹԲԻԼԻՍԻ, ԻՍԱՆԻ

Նախընտրական հանդիպումները շարունակում է նաեւ «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունից Իսանիի պատվիրակ Նիկա Էլիսաշվիլին:

Թբիլիսիի Հավլաբար եւ Էլիա թաղամասերի բնակիչների հետ հանդիպմանը՝ Նիկա Էլիսաշվիլին ներկայացրեց կուսակցության նախընտրական ծրագիր, նշելով, որ դրանում առանձնակի ուշադրություն է հատկացված ինչպես ենթակառույցային օբյեկտների կարգավորմանը, այնպես էլ՝ բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը:

- 35 տարի է, ինչ ապրում եմ Հավլաբարում եւ քաջատեղյակ եմ թաղամասի գրեթե բոլոր փողոցների բնակիչների կարիքներին: Քաջատեղյակ եմ նաեւ այն պատճառով, որ տարիների ընթացքում եղել եմ Իսանիի շրջանի վարչության նախագահ եւ իմ նախագահության օրոք մեծ թվով նախագծեր են իրականացվել շրջանում, եւ այսօր այդ գործընթացը շարունակվում է: Մարդկանց հուզող հիմնախնդիրները շատ են, եւ նախընտրական հանդիպումներն ընկերների, բարեկամների, ծանոթների հետ առնչվելու, նրանց լսելու եւ իմ ասելու հիանալի հնարավորություն են,- հայտարարեց Նիկա Էլիսաշվիլին:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ - ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մեծամասնական պատգամավոր, հոկտեմբերի 26-ին ացկացվելիք խորհրդարանական ընտրությունների համար վերոնշյալ մունիցիպալիտետներում «Վրացական երազանք» կուսակցության պատվիրակ Սամվել Մանուկյանը, Վրաստանի խորհրդարանի 10-րդ գումարման պատգամավոր, «Վրացական երազանքի» ընտրացուցակով պատգամավորության թեկնածու Սմբատ Կյուրեղյանը, նախընտրական քարոզարշավի շրջանակներում, շարունակում են հանդիպումներ անցկացնել Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների բնակիչների հետ: Սամվել Մանուկյանը, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների քաղաքապետեր Մելքոն Մակարյանի եւ Անի Մոսոյանի, սակրեբուլոյի նախագահներ Նաիրի Իրիցյանի ու Վահան Արոյանի ուղեկցությամբ, հանդիպումներ է ունեցել Ախալքալաքիի մունիցիպալիտետի Խուլգումո, Կուլիկամ, Կարտիկամ, Բուզավեթ, Աբուլ, Թախչա, Բավրա, Մարտունի, Խոսպիո, Մաջադիա, Կորխ, Թոթխամ, Արագվա, Խանդո, Վարեւան, Ալաստան, Գոկիո, Օրջա, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գորելովկա, Օրլովկա, Եֆրեմովկա, Ժդանով, Սպասովկա, Սամեբա, Սաթխա, Օրոջալար, Մեծ եւ Փոքր Արագյալ գյուղերի բնակիչների հետ:

ԱԽԱԼՑԻԽԵ - ԲՈՐԺՈՄԻ - ԱՍՊԻՆՁԱ - ԱԴԻԳԵՆԻ

Առաջիկա խորհրդարանական ընտրությունների քարոզարշավին ակտիվ ներգրավվել է նաեւ Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի Ախալցիխեի, Բորժոմիի, Ասպինձայի եւ Ադիգենիի մեծամասնական պատգամավոր, հոկտեմբերի 26-ի ընտրությունների «Վրացական երազանքի» պատվիրակ Անտոն Օբոլաշվիլին:

Անտոն Օբոլաշվիլին վերջին օրերին հանդիպումներ է ունեցել Ախալցիխեի մունիցիպալիտետի Ածղուրի, Ասպինձայի մունիցիպալիտետի Ռուսթավի, Խիզաբավրա, Օշորա, Օթա, Դամալա գյուղերի բնակիչների հետ:

Անտոն Օբոլաշվիլին, Ախալցիխեի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլու հետ հանդիպել է մունիցիպալիտետի երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների, մունիցիպալիտետի հանրային դպրոցների մանկավարժների հետ:

ԲՈԼՆԻՍԻ - ԴՄԱՆԻՍԻ - ԹԵԹՐԻԾՂԱՐՈ - ԾԱԼԿԱ

Բոլնիսիի մունիցիպալիտետի քաղաքապետ, հոկտեմբերի 26-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններ

թյունների Բոլնիսիի, Դմանիսիի, Թեթրիծղարոյի եւ Ծալկայի մունիցիպալիտետներում «Վրացական երազանքի» պատվիրակ Դավիթ Շերազադիշվիլին, քարոզարշավի շրջանակներում, հանդիպումներ է ունեցել Ծալկայի մունիցիպալիտետի Սաղդրիանի, Գանթիադի, Սամեբա, Աշխալա, Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի Ծինծղարո, Քոսալաուրի, Խաիշի, Մարաբդա, Բոլնիսիի մունիցիպալիտետի Խատիսոփելի, Վանաթի, Ռաճիսուբանի, Բոլնիսի, Քվեմո Բոլնիսի գյուղերի բնակիչների հետ:

Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԳԵՐՄԱՆԻԱ

Հոկտեմբերի 9-ին, Գերմանիայի նախագահական նստավայրում, կայացավ Հայաստանի նախագահի դիմավորման հանդիսավոր արարողությունը, որին հաջորդեց նախագահներ Վահագն Խաչատուրյանի եւ Ֆրանկ-Վալտեր Շթայնմայերի հանդիպումը:

Զրույցի ընթացքում կողմերը մտքեր փոխանակեցին Հայաստանի եւ Գերմանիայի համագործակցության մի շարք օրակարգային հարցերի շուրջ: Անդրադարձան տարածաշրջանային եւ գլոբալ մի շարք հիմնախնդիրների, որոնց վերաբերյալ նախագահները ներկայացրեցին իրենց դիրքորոշումները:

Զրույցի ավարտին՝ Գերմանիայի նախագահ Ֆրանկ-Վալտեր Շթայնմայերն ընդգծեց, որ Գերմանիան աջակցում է հարեւանների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու Հայաստանի ձգտումներին եւ հնարավոր ջանքեր կգործադրի հարավկովկասյան տարածաշրջանում վերջնական խաղաղության հաստատման համար:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին, Մոսկվայում, ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստի շրջանակներում, կայացավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:



Հանդիպմանը նշվեց, որ Հայաստանի ու Ռուսաստանի միջեւ վերջին ամիսների ընթացքում կայացել է բավական ակտիվ քաղաքական երկխոսություն:

- Ուրախ եմ արձանագրել, որ վերջին ամիսների ընթացքում մեզ մոտ կայացել է բավական ակտիվ քաղաքական երկխոսություն: Նախ՝ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկն է ժամանել Երեւան, եւ կայացել է ոչ միայն միջկառավարական հանձնաժողովի հանդիպում, այլեւ բավական բովանդակալից խոսել ենք երկկողմ օրակարգի գրեթե բոլոր հարցերի շուրջ: Հոկտեմբերի սկզբին Երեւանում կայացել է ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի նիստ, եւ այդ միջոցառման շրջանակում մենք բովանդակալից քննարկել ենք մեր համագործակցությանն առնչվող հարցեր: Այսօր եւս լավ հնարավորություն է՝ ընդհանրացնել այդ քննարկումները, եւ շատ ուրախ եմ, որ ընձեռվել է նման հնարավորություն,- հայտարարեց Նիկոլ Փաշինյանը:

Հայաստանի ու Ռուսաստանի ղեկավարների հանդիպմանը նշվեց, որ, Կազանում հոկտեմբերի 22-24-ը կայանալիք BRICS-ի գագաթնաժողովի շրջանակներում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը երկկողմ հանդիպում կունենան:

- Սպասում եմ ձեզ Կազանում՝ BRICS-ի գագաթնաժողովին: Հուսով եմ, որ դա կլինի ե'ւ օգտակար, ե'ւ հետաքրքիր: Մենք նաեւ երկկողմ հանդիպում կանցկացնենք, ինչպես նաեւ՝ հնարավորություն կլինի զրուցել մի քանի տասնյակ պետությունների բազմաթիվ գործընկերների հետ, որոնք ծրագրում են մասնակցել այդ աշխատանքներին,- ասաց ՌԴ նախագահը:

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԲԱՑՎԵՑ «ՆԵՐՈՒԺ 5.0» ԾՐԱԳԻՐԸ

Կայացավ «Ներուժ 5.0» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափների ծրագրի 6-օրյա միջոցառման պաշտոնական բացումը: Այս տարի ծրագիրն անցկացվում է հոբելյանական՝ 5-րդ անգամ:

Ըստ Հայաստանի բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանի՝ այս ծրագիրը կարեւոր քայլ է սփյուռքի հետ կամուրջներ ստեղծելու եւ համահայկական ներուժը Հայաստանում կենտրոնացնելու համար: Ավելի քան 35 սփյուռքահայ ստարտափներ Հայաստան են ժամանել՝ ներկայացնելու իրենց տեխնոլոգիական գաղափարները, զարգացնելու եւ հաստատելու կայուն բիզնես հենց Հայաստանում:

Ծրագրին մասնակցելու համար, այս տարի ստացվել է 64 հայտ՝ 20 երկրից, ընտրվել է 28 ստարտափ՝ 16 երկրից՝ Ռուսաստան, Վրաստան, Լիբանան, Քուվեյթ, Հունաստան, Լատվիա, Չեխիա, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ավստրիա, Շվեդիա, ԱՄՆ, Կանադա, Արգենտինա:

«Ներուժ» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափների պետական ծրագրի նպատակն է՝ խթանել Հայաստանի տնտեսական առաջընթացն ու ստարտափ էկոհամակարգի զարգացումը, մասնագիտական հայրենադարձությունը եւ համահայկական ներուժի ու կարողությունների ներգրավումը Հայաստանի տնտեսական զարգացման գործընթացներում:

Հաղթելու դեպքում, «Գաղափարի փուլ» եւ «Աճի փուլ» անվանակարգերում, կտրամադրվեն դրամաշնորհներ:

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ՀՌՈՄԻ ՄԻՋԵՎ

Պաշտոնական այցով Իտալիայի մայրաքաղաք այցելած Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հանդիպել է Հռոմի քաղաքապետ Ռոբերտո Գուալտիերիի հետ:

Պաշտոնական ձեւաչափով հանդիպմանը հաջորդել է «Բարեկամության եւ համագործակցության» համաձայնագրի ստորագրման հանդիսավոր արարողությունը:

Ստորագրված փաստաթղթով գործակցություն կծավալվի քաղաքային կառավարման, շրջակա միջավայրի պաշտպանության, կրթության ու մշակույթի եւ մի շարք այլ ոլորտներում:

Մեկ անգամ եւս շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության ու համագործակցության պատրաստակամության համար՝ քաղաքապետ Տիգրան Ավինյանը Հռոմի գործընկերոջը փոխադարձ այցով հրավիրել է Երեւան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ

«Հայաստանում 2024-ի հուլիսին տնտեսական աճի տեմպը թուլացել է՝ հունիսի 7 տոկոսի դիմաց կազմելով 6,2 տոկոս: Գնաճն օգոստոսին բարձրացել է՝ կազմելով 1,3 տոկոս:

Հուլիսին գրանցվել է բյուջեի 69 միլիարդ ՀՀ դրամի պակասուրդ: Ասվածը հիմնականում պայմանավորված էր ծախսերի աճով»,- ասված է Համաշխարհային բանկի «Հայաստան. տնտեսության ամենամսյա տեսություն-սեպտեմբեր 2024» ամփոփագրում:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԾԱԽՍԵՐՆ ԱՎԵԼԱՑՎԵԼ ԵՆ 111 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄՈՎ

Պաշտպանության նախարարության 2025թ. ծախսերը նախատեսվում է իրականացնել հինգ ծրագրերի շրջանակներում. դրանց գծով պետական բյուջեով նախատեսվում է 664 միլիարդ 653 միլիոն դրամ, որից ընթացիկ ծախսերի գծով՝ 256 միլիարդ 970 միլիոն դրամ կամ՝ 38,7 տոկոս, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով՝ 407 միլիարդ 683 միլիոն դրամ կամ՝ 61,3 տոկոս: Այս մասին նշված է «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում:

Ըստ նախագծի՝ ծախսերի աճը, ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի համեմատ, կկազմի 110 միլիարդ 755 միլիոն դրամ:

ԳՐԱՆՑՎԵԼ Է ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹՎԻ ԱՃ

Հայաստանի զբոսաշրջության կոմիտեն ներկայացրել է 2024 թվականի սեպտեմբերին դեպի Հայաստան զբոսաշրջային այցելությունների թիվը:

Վիճակագրության մեջ նշվում է, որ 2024 թվականի սեպտեմբերին Հայաստան է այցելել 236 հազար 561 զբոսաշրջիկ, 2023թ. սեպտեմբերին՝ 260 հազար 618:

Դեպի Հայաստան առավել շատ զբոսաշրջային այցելություններ գրանցվել են Ռուսաստանից (43 տոկոս), Վրաստանից (12 տոկոս) եւ Իրանից (8 տոկոս):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՑ ՄԱՆԿԱԿԱՆ ԴԵԼՓՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ԽԱՂԵՐԻՆ

Ղրղզստանի Հանրապետության մայրաքաղաք Բիշքեկում անցկացվեցին ԱՊՀ պետությունների առաջին բաց մանկական Դելփյան խաղերը՝ դասական, ազգային եւ ժամանակակից արվեստի տեսակների տասնմեկ անվանակարգերում:

Խաղերին մասնակից նաեւ Հայաստանի պատվիրակությունը՝ 53 մասնակիցներ, այդ թվում՝ 7-14 տարեկան շուրջ 500 պատանիներ: Միջազգային ժյուրիի կազմում ընդգրկված էին մշակույթի եւ արվեստի 30 ակնառու գործիչներ:

Հայաստանի ներկայացուցիչները հանդես են եկել խաղերի տարբեր փուլերում՝ արժանանալով երեք ոսկե, մեկ արծաթե, մեկ բրոնզե մեդալների եւ երկու հատուկ մրցանակային դիպլոմների:

ՎՐԱՑ ԳՐՈՂ ԻՎԱ ՓԵԶՈՒԱՇՎԻԼԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ «ԲՈՒՆԿԵՐ» ՎԵՊԸ

Վրաց գրող Իվա Փեզուաշվիլին Հայաստանում ընթերցողների դատին հանձնեց «Բունկեր» վեպի հայերեն թարգմանությունը: Դա Սիմոնյանների ընտանիքի մասին պատվող սագա է, ընտանիք, որը Արցախյան պատերազմի ժամանակ փախչում է Թբիլիսի: 24 ժամվա ընթացքում զարգացող պատմությունը կոնֆլիկտների, դրամաների ու մարտահրավերների կծիկ է, որի մեջ հայտնվում է ամբողջ ընտանիքը:

Թարգմանությունը վրացերենից իրականացրել է Անի Աստատուրյանը, խմբագիրն է Արքմենիկ Նիկողոսյանը: Գիրքը լույս է ընծայել «Անտարես» հրատարակչությունը:

- Սա հրաշալի հնարավորություն է երկու հարեւան ժողովուրդների, հատկապես երիտասարդության մտածողությունը ճանաչելու, հարաբերվելու ու համեմատվելու տեսանկյունից: Եթե ոչ հիմա, վստահ եմ, որ հետագայում վեպը շատ մեծ հետաքրքրության կարժանանա: Ուզում եմ առանձնահատուկ շնորհակալություն հայտնել Անիին, որը կարողացավ հաղթահարել ոճի առումով բարդ լեզուն, եւ ահա ունենք այս հրաշալի արդյունքը: Հուսով եմ, որ ոչ միայն միասին կրկին կաշխատենք, այլեւ հայ գրողների գործերը նույնպես վրացերեն լույս կտեսնեն Վրաստանում,- նշեց Արքմենիկ Նիկողոսյանը:

Գրքի հեղինակն էլ ընդգծեց, որ մեծ պատասխանատվությամբ է մոտեցել հատկապես պատմական իրադարձություններին: Խոսել՝ գրքի ստեղծման մասին, շեշտել՝ ուրախ է լինել Հայաստանում:

Գրողը մեծացել է թբիլիսյան, այսպես կոչված, իտալական բակերից մեկում, որտեղ խաղացել է հայերի հետ եւ երբեք չի զգացել ազգային տարբերությունները: Հայերի հետ մշտապես մեծ սիրով է շփվել ու համագործակցել:

Գրքի շնորհանդես-քննարկմանը ներկա էր Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

19.10.2024 Սուրբ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննես Ավետարանիչների հիշատակի տոն

Մատթեոսը Տիրոջ 12 առաքյալներից է, առաջին Ավետարանի հեղինակը: Մատթեոս անունը հունական է, այն եբրայերեն Ղեւի անունն է, որ նշանակում է Աստվածատուր: Սուրբ Մատթեոսը նախկինում Կափառնա քաղաքում մաքսավոր է եղել: Անսալով Տիրոջ ձայնին՝ նա վաճառել է իր ունեցվածքը, բաժանել այն աղքատներին՝ դարձել Քրիստոսի հետեւորդներից: Նա Աստծո խոսքն է քարոզել Պարթեւաստանում եւ Պաղեստինում:

Սուրբ Մարկոս Ավետարանիչը բնիկ երուսաղեմացի էր: Կոչվում էր նաեւ Յովհաննես:

Սուրբ Ղուկաս Ավետարանիչը երրորդ ավետարանի հեղինակն է:

Սուրբ Յովհաննես առաքյալը Դ Ավետարանի, երեք ընդհանրական նամակների եւ «Հայտնության» գրքի հեղինակն է: Յիսուս նրան համարել է «սիրելի աշակերտ»: Յիսուս այնքան էր սիրում ու վստահում նրան, որ խաչելության պահին Աստվածամորը հանձնեց նրա խնամքին:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

«Լազարե» հիմնադրամի նախաձեռնությամբ, «Երիտասարդները Հարավային Կովկասում խաղաղության համար» նախագծի շրջանակներում, Քոբուլեթիում, Պատրիարքության Բոբողվաթի նստավայրում կայացավ Վրաստանում գործող կրոնական դավանանքների ներկայացուցիչների աշխատանքային հանդիպումը, որին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս եպիսկոպոս Դավթյանի օրհնությամբ, թեմը ներկայացնում էին Տեր Կիրակոս քահանա Սիմոնյանը եւ Գեւորգ սարկավագ Ավետիսյանը:

Նշենք, որ նախագիծն իրականացվում է 2007 թվականից եւ ընթացիկ 2022-2026 թվականների փուլի նպատակն է՝ աջակցել խաղաղության կառուցմանը Հարավային Կովկասի տարածաշրջանում:

2022 թվականից նախագծում ներգրավված են Վրաց Ուղղափառ Սուրբ եկեղեցու, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի եւ Վրաստանի մահմեդական համայնքի ներկայացուցիչները, ովքեր հանդիպում եւ քննարկում են երկրում եւ տարածաշրջանում առկա իրավիճակը, հակամարտությունների վերափոխման եւ խաղաղության կառուցման պայմանները, կրոնի եւ հոգեւորականության դերը, ցույց են տալիս համագործակցության ուղիներն ու հնարավոր միջամտության հնարավորությունները:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԿՏԵՂԱԴՐՎԻ ԷՐԵԿԼԵ ԵՐԿՐՈՐԴԻ ԱՐՁԱՆԸ

Վրաստանի կառավարության նախաձեռնությամբ ծրագրվում է Թբիլիսիում, Կախեթիի մայրուղու վրա կանգնեցնել էրեկլե Երկրորդի արձանը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, ի պատիվ ազգային հերոս էրեկլե Երկրորդի, նրա հուշարձանը, ըստ Մերաբ Մերաբիշվիլիի էսքիզի, կկանգնեցվի Կախեթիի մայրուղու վրա՝ ՆԳՆ-ի մոտ, որտեղ քաղաքապետարանն իրականացնում է այգու վերականգնման նախագիծը:

- Մեր պարտքն է պատշաճ կերպով հարգել Վրաստանի պատմությունն ու բոլոր հերոսներին: Մեր հերոս էրեկլե Երկրորդ թագավորի անձնազոհությունն ու իմաստությունը պահպանեց Վրաստանի քրիստոնեական ինքնությունը, որը մեր Եվրոպական ինքնության անբաժան մասն է,- ասաց վարչապետը:

ՍՊՈՐՏ

ՖՈՒՏԲՈԼԻ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՄՐՑԱՇԱՐԸ ԹԵՎԱԿՈԽԵԼ Է ՎՃՌՈՐՈՇ ՓՈՒԼ

Հոկտեմբերի 10-11-ին, Վրաստանի եւ Հայաստանի հավաքականների համար, ֆուտբոլի Ազգերի լիգայի մրցաշարում վճռորոշ փուլ էր:

Լիգայի «B» դիվիզիոնում հանդես եկող Վրաստանի հավաքականը, մեկնարկային երկու խաղերից հետո, առավելագույն 6 միավորով գլխավորելով աղյուսակը, հոկտեմբերի 11-ին, ուշ երեկոյան, լեհական Պոզնան քաղաքում իր ուժերը չափեց Ուկրաինայի հավաքականի հետ:

Նշենք, որ հոկտեմբերի 11-ին հանդիպումը թվով 10-րդն էր Վրաստանի եւ Ուկրաինայի հավաքականների համար, ընդ որում, անցած ինը հանդիպումներից վեցը հաղթել են ուկրաինացիները, երեքը ավարտվել է ոչ-ոքի:

Ազգերի լիգայի մրցաշարում՝ Վրաստանի հավաքականը հերթական հանդիպումը կանցկացնի սեփական հարկի տակ, հոկտեմբերի 14-ին, Ալբանիայի հավաքականի հետ:

Ինչ վերաբերում է Ազգերի լիգայի «C4» ենթախմբում հանդես եկող Հայաստանի հավաքականին, ապա մեկնարկային խոստումնալի խաղից հետո (4:1 հաշվով առավելության հասավ Լատվիայի հավաքականի նկատմամբ), որոշակի հետընթաց ապրեց, 0:2 հաշվով զիջելով Հյուսիսային Մակեդոնիայի հավաքականին, իսկ հոկտեմբերի 10-ին, վերջին րոպեներին, խուսափեց Ֆարերների հավաքականի հետ մրցամարտում պարտությունից: Հանդիպումն ավարտվեց ոչ-ոք՝ 2:2:

Հայաստանի ֆուտբոլի ազգային ընտրանին հաջորդ հանդիպումը կանցկացնի հոկտեմբերի 13-ին՝ Երեւանում ընդունելով Հյուսիսային Մակեդոնիային:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ոչ լեգալ: 9.Մրցույթի մասնակիցներին գնահատելու փորձագետների խումբ: 10.Քարթլիի թագավորներից: 11.Քաղաք Չեխիայում: 13.Հարսնացուի հատուցագինը: 16.Մերձարեւադարձային միրգ: 17.Կարգ, գիծ: 19.Կատվազգի գազան: 22.Ավտոմոբիլի թափքի տեսակ: 24.Ռազմանավի տեսակ: 25.Մայրցամաքային ծանծաղուտ: 27.Տոմս չունեցող: 29.Զամբիայի մայրաքաղաքը: 32.Սպորտի երեք վարժություններից բաղկացած մարզաձեւ: 33.Վրաց գրող ... Ճոնքաձե: 35.Սարքավորում: 37.Մեքենան վարելու հարմարանք: 39.Ծծմայր, դայակ: 40.Ալ.Դյումայի «3 հրացանակիրներից»: 43.Ժառանգականության գործառնական եւ կառուցվածքային միավոր, որը վերահսկում է որոշակի հայտանիշի կամ հատկության զարգացումը: 44.«Այն գործի կեսն է»: 47.Աղոթք «... Մարիա»: 49.Միջին չափի հյուրանոց: 50.... տեղին: 53.Պղնձե սկուտեղ: 54.Քաղաք Բելգիայում: 55.Երբեւիցե, բնավ: 57.Գետ Ռուսաստանում: 58.Շվեյցարացի ֆուտբոլիստ Դանիել...:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Փղի քիթ: 2.Գետ ՌԴ-ում: 3.Միշտ: 4.Զորեղ: 5.Նորվեգացի հետախույզ ... Ամունդսեն: 6.Կինոնկար: 8.Արտասվող: 12.Ոչխարի «հագուստը»: 14.Գետ Արեւելյան Ասիայում: 15.Մահմեդական կրոնավոր: 18.Պապուասների լեզուներից մեկը: 19.Զոհաբերության բլիթ (հին Հունաստան): 20.Քաղաք Ինդոնեզիայում: 21.Քարթլիի թագուհի, Վրաց Ուղղափառ եկեղեցու Սրբերից: 23.Աշոտը՝ փաղաքշական: 26.Ականջ դնել: 28.Տկար, նիհար, հյուծված: 29.Փիլիսոփա հնագույն Չինաստանում, Դաոսականության ականավոր դեմքերից ... Ցզի: 30.Կշտամբանք: 31.Մասերի բաժանել: 34.Անգլիացի ծովակալ: 36.Նիրի: 38.Ընտանի կենդանի: 41.Հնագույն ազգ Հարավային Կովկասում: 42.Գետ Ռուսաստանում: 45.Մոդայիկ ինքնատիպություն: 46.Կթող սարք: 48.Արեւմտահայ բանաստեղծ, փիլիսոփա ... Տեմիրճիպաշյան: 51.Օրօրի, օր...օրե: 52.Սուր եւ բարձր աղաղակ՝ բացականչություն: 56.Բիլիարդի խաղաձող:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Քանաքեռ: 5.Նաթալի: 11.Իրավ: 12.Ուսադիր: 13.Նարե: 14.Համր: 15.Ամիտ: 16.Ոգին: 18.Սա: 19.Նանի: 20.Իսա: 22.Վարդան: 24.Անի: 26.Դու: 27.Ձավար: 30.Լու: 32.Քվանտ: 33.Ջրարջ: 34.Իլյա: 36.Սվաղ: 37.Իոն: 38.Ասր: 39.Աջ: 40.Ափ: 41.Ակր: 42.Արտեմ: 44.Ուսամա: 46.Ալո: 47.Ջուր: 48.Ցա: 50.Բարի: 51.Մարտին: 55.Անհոտ: 57.Ավա: 58.Երգես: 59.Տարոն: 61.Կարինե: 62.Մարինա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Առաջնորդ: 3.Արիզոնա: 4.Ռեհանի: 5.Նեմրութ: 6.Թինաթին: 7.Արամ: 8.Լարիսա: 9.Իվետա: 10.Սուխիշվիլի: 14.Հին: 17.Գանձասար: 21.Սիփան: 23.Դուքան: 25.Անջափարիձե: 28.Անվստահ: 29.Վտարել: 31.Ուլիկ: 33.Ձաջուռ: 35.Յորք: 41.Ադամ: 42.Արծիվ: 43.Մոցարտ: 45.Ազատ: 49.Անգամ: 50.Բոսոր: 52.Աիդա: 53.Տարի: 54.Նանե: 56.Հերա: 60.Նի:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍ ՄՈՒՏՔԱՐԱՆ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱՅՈՎՆԵՅԼՈՒ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ» ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445